

անպէս նա նորան կը հռչակի իբրև տաղանդաւոր հրապարակախօս. եթէ դա Մատթէոս Մամուքեանն է, պ. Բերբերեանը չի նապիլ ոչ մի հանգամանքի և առաց ալ և ալլութեան կը թիվ՝ տաղանդաւոր հրապարակախօս և լուսաւորւած մանկավարժ Մամուրեան (էջ 446).

Անձզութիւններից վիշենք ան, որ պ. Վեսելյավիլին ոլսալմամբ ընդունել է իրը Ռաֆֆիի լոբելեանը չտօնւեց, մինչդեռ նա տօնւեց ժողովարութեան և պարզեների ու ուղերձների ձևով, թէն ոչ մի օրւակ հանդիսով. և պղ մանաւանդ ուշադրութեան արժանի է, որ Ռաֆֆին մնանում առաջինն եղաւ, որ արժանացաւ լոբելեանական ընդհանուր ցողցերին. Դորա հակառակ պ. Բերբերեանը տօնել է տալիս պ. Պոօշեանի լոբելեանը, մինչ գեռ ճշմարտութիւնը ալս է, որ աղդ լոբելեանի համար 1889-ին մի մասնաժողով կազմնեց, սական չգործեց, որքան մեղ լատնի է:

Խնդիր կարող է լինել թէ որ-

քան նպատակաւարմար է ան ձեր, որ արւած է ներկակ Ժողովածուին, ուր ալ և ալլ վէպերից միան հատհատ զլուխներ են թարգմանւած. Անկասկած է, որ գերմանական Աշտմենիche Bibliothek-ի ձեր գերադասելի է, քանի որ նորա ամեն մի հաստորիկը մի ամբողջութիւն է կազմում, Բայց և անպէս ուռւս հասարակութեան ակժմնան պահանջի համար ներկաւ Ժողովածուն իւր հատընտիր ձևով ոչ միան կարող է օդ տակար լինել և գուցէ լինի աւելի և հետաքրքրական. Հետաքրքրութիւն շարժելու տեսակէտից՝ պ. պ. Վեսելյավիլու և Բերբերեանի ժողովածուն մնձապէս աշողւած պէտք է համարել.

Մի վերջին նկատողութիւն և ընթերիստ չի նշանակում միան վիպասան, ալ և ոտանաւրով գրող բանասեղծներ, դրամատուրգներ և ալն, որոնք գուրս են գցւած ներկաւ հաստորից,

Ա. Ա.

ՀԵՂԻՆԱԿ ?, փոխագրեց Գրիգորիս Երգնկեանց.—«Թւաբանական խնդիրներ և օրինակներ»: Տարրական դասընթացք. ա. և բ. տարի, 1892 թ., 108 էջ, գինն է 30 կոպէկ:

Պ. Գրիգորիս Երգնկեանցը իր աշխատութեան լառաջաբանի մէջ լսպնում է, որ օգտական է Գոնդեն-բերգի դասագրքից, «շատ փափոխութիւններ անելով (?) և բոլորովին ինքնուրուն ձեւ տալով (?) մեր գիւ-

դական և քաղաքավին մանկանց կեանքի պայմանների համաձայնու Տեսնենք թէ որքան ճշմարտութիւն է պարունակում աղդ խօսքերի մէջ:

Պ. Գոնդենբերգի դասադրութ-

գետեղւած են 752 խնդիրներ. պ. Երզնկեանցի դասագրքում նոնչպէս 752. Երկու դասագրքերի բոլոր խնդիրները համեմատած իրար հետ մի առ մի սկզբից մինչև վերջը, ոչ բովանդակութեամբ, ոչ թւերով մազաշափ չեն տարբերում իրարից, Բացէք ուսա հեղինակի դասագրքի նոր և է էջը, կարդացէք ալդ էջի առաջի պատահող խնդիրը, վատե վերցրէք հակ հեղինակի դասագրքի նոր համարով խնդիրը և դուք կը տեսնէք, որ գործ ունէք տառ առ տառ, կէտ առ կէտ թարգմանութեան հետ. Ազդ ամենց լիտու մարդ մնում է զարմացած, թէ ինչպէս պ. Գրիգորիս Երզնկեանցը օրը ցերեկով սուս է խօսում, հռչակելով իր դասագիրքը փոխադրութիւն և ոչ թէ թարգմանութիւն, Դա առնւազն անբարեխղութիւն է. Երբ մարդիկ գործելով որ և է լանցանք, կամենում են իրանց արդարացրել յնականաբար դիմում են անբարեխղու միջոցներին, Նորնը անում է և պ. Երզնկեանցը. Որպէս զի խարուսիկ հիմք ոճենիակ ասելու, որ իր դասագիրքը փոխադրութիւն է և ոչ թէ թարգմանութիւն, նա դիմում է հետևալ աշխակապութեան, Գնդենըրեգը բացի 752 խնդիրները, իր դասագրքի վերջում զետեղել է մի շարք թւական օրինակներ. արտադրելով ալդ օրինակները ամբողջովին, հակ հեղինակը աւելացրել է իրանից և ալ օրինակներ, թէ ինչ քանակութեամբ և ինչպիսի արժէք ոճեցող, կպարզենք աչս բոպէին, Ռուս հեղինակը երկրորդ արաւակ դասընթացի համար տւել է 513

խնդիրներ և 424 թւական վարժութիւններ Ազդ ամենը արտագրելով, հակ հեղինակը իրանից աւելացրել է 16 թւական վարժութիւններ, Օտար հեղինակի 513 խնդիրները բառ առ բառ թարգմանելով, առանց զիթ մի հատ ինքնուրուն խնդիր աւելացնելու և միայն նոր 424 թւական օրինակներին կցորդելով 16 ողբանելի թւական օրինակներ, միթէ վերին աստիճանի անբարեխղութիւն, նորն խակ անազնուութիւն, չի լինի հոչակել իր դասագիրքը փախադրութիւն և ոչ թէ թարգմանութիւն. Առաջի տարւաէ դասընթացում Կոլդենբերգը զետեղել է 239 խնդիրներ և 102 թւական վարժութիւններ, պ. Երզնկեանը 239 խնդիրները դարձեալ բառ առ բառ թարգմանելով, առանց սեպանական գէթ մի խնդիր տալու, 102 թւական օրինակներին մէջ. մէջ աւելացրել է ալ օրինակներ 110 թւերի սահմաններում. Ազդ աւելնորդ օրինակները ոչինչ հմտութիւն, ոչինչ աշխատութիւն չեն պահանջում. Խւրաքանչիւր ուսուցիչ, որքան էլ լինի ագէտ, ամեն մի բոպէում կարող էր կազմել հարիւրաւոր համանման թւական վարժութիւններ. Անհամեմատ գէւար է և առանձին հմտութիւն և աշխատանք է պահանջում խնդիրներ կազմելը. խակ խնդիրներ, ինչպէս ասացինք, պ. Երզնկեանցը ինքը չէ տալիս և ոչ մի հատ. Բացի ալդ ամենը, մինչդեռ ուսա հեղինակի թւական օրինակները դասաւորած են խիստ սիստեմատիկաբար, պ. Երզնկեանցի վարժութիւնների մէջ սիստեմ ասած բանը աւելորդ է հաշ-

ւած, որով և բացատրում է հնատեւեալ հանգամանքը: Խնչպէս լաւտնի է, կան բազմապատկման և բաժման աղիւսակներ, բայց կտն և գումարման ու հանման աղիւսակներ, որ չատ ուստուցիչներին դեռ լաւտնի էլ չեն: Երեսում է գումարման և հանման աղիւսակների մասին պ. Երգնկեանցն էլ գաղափար չունի, ալլապէս նա Գոլդենբերգի գումարման և հանման աղիւսակները ստորեցնելու նպատակով տւած թւական վարժութիւնները, իր աւելացրած օրինակներով, խառնաշխութելով խառաջը դարձնիլ:

Դորա հակառակ բազմապատկման աղիւսակները ընդհանուրին չափնի են, և աչդ պատճառով աչդ գիտէ նաև պ. Երգնկեանցը: Որը աչդ գործողութիւնների աղիւսակներում փոփոխութիւն անել իրան չի թուզ տեւել: Մեր թարգմանիչը հետեւապէս չի հասկացնել որ Գոլդենբերգի բնագրի հ1-երորդ էջում դրւած թւառնշանները աղիւսակներ են և ոչ վարժութիւններ:

Եւ ալլպէս, պ. Երգնկեանցը Գոլդենբերգի 752 խնդիրները բառ առ բառ թարգմանելով և ուսու հեղինակի տւած թւական օրինակներին աւելացնելով թէ քանակութեամբ և թէ արժողութեամբ ոչինչ նշանակութիւն չունեցող վարժութիւններ, ունեցել է մի նպատակ՝ թող վիճել մարդկանց աշքին, վարագուրել իր անբարեխզնութիւնը: Այս վերին աստիւժանի անբարեխզնութիւն է՝ թարգմանել մի դասագիրք և աւելացնելով մի քանի ողորմնիլի, աւելորդ և խառնը վիճուր թւական վարժու-

թիւններ, հաւատացնել մարդկանց, որ իր դասագիրքը կազմելիս միայն ոգունել է» օտար հեղինակից «չատ փոփոխութիւններ անելով և բոլորավին ինքուրուն ձեւ տալով մեր գիւղական և քաղաքակին մանկանց կեանքի պայմանների համաձայն...»:

Պ. Երգնկեանցը կարող է վերականգնել իր բարեխզնութիւնը, դասագրքի Յ-րդ տպագրութեան ձականին գնելով Գոլդենբերգի անունը և պարզապէս խոստովանելով իր թարգմանութիւնը, ինչպէս արել է, օրինակի, Սկմէօնեանցը հանգուցեալ Եւստոչեւսկու վերաբերեալ:

Դասնանք դասագրքերի բովանդակութեան: Պ. Երգնկեանցի թարգմանած դասագրքում առաջին տարւակ ընթացքում անցնելիք ինդիրները և օրինակները վերցրած են 1—10 թւերի սահմաններից: Ասել է հայ հեղինակը կուրօրէն թարգմանելով ուսու հեղինակին, բոլորավին ի նկատի չէ առել ուսուաց և հարց դպրոցների ծրագիրների տարբերութիւնը:

Բանը այն է որ, լուսաւորութեաննախարարութեան ծրագրի համեմատ, ներքին Ռուսասասնի տարրական դպրոցների Ա. բաժանմունքում պէտք է անցնել թւարանական չորս գործողութիւնները 1—10 թւերի սահմաններում, որի համեմատ և Գոլդենբերգը կազմել է իր դասագրքը:

Մեր ծխական դպրոցների Ա. բաժանման մէջ, համեմատ վեհափակաթողիկոսից հաստատւած ծրագրի, պէտք է անցնել թւարանական չորս գործողութիւնները 1—20 թւերի

սահմաններում:

Հետեաբար պ. Երզնկեանցի թարգմանած դասագիրքը տալով ինդիրներ և օրինակներ միայն 1—10 թւերի սահմաններում, մեղանչում է հակ դպրոցների դէմ, կիսով չափ կորցնելով իր արժէքը, որովհետև կարող է ծառակել իր նպատակին միայն մինչև լուսւար ամիսը. Հակ թարգմանչին մեռմէ կազմել և աւելացնել իր դասագրքին 10—20 թւերի սահմաններից վերցրած նորնքան խնդիրներ և օրինակներ, որքան խնդիրներ (239) և օրինակներ (102) քերւած են 4—10 թւերի սահմաններից. Միայն այդ ժամանակ պ. Երզնկեանցի Ա. տարւակ դասագիրքը կարող է ընդունել հակ դպրոցների Ա. բաժանմունքում. միայն արդպէս վարւելով հակ հեղինակը Գողենքերգի դասագիրքը լարմարեցրած կլինի մեր դպրոցական կենաքի հաճգամանքներին և ոչ թէ մի քանի ողորմելի, աւելորդ և խառնը միանցուր թական օրինակներ աւելացնելով...

Գողենքերգի դասագրքի երկրորդ էական պակասութիւնը կալանում է նորանում, որ աշնտեղ կան բաւական թւով դժւարամարս և 2-րդ բաժանման աշակերտների հասկացողութեան համար անմատելի խնդիրներ, թերենք մի քանի օրինակներ:

1. Վաճառականը 25 արշին սե և կապուտ մահուդ 76 մանէթով ծախեց. սև մահուդի արշինի համար ստացաւ 6 մանէթ, իսկ կապուտի արշինի համար — 4, Նա որքան սե և որքան կապուտ մահուդ ծախեց.

Դա իսկապէս ալզերքական և ոչ թէ թւարանական խնդիր է, և ես

փորձով գիտեմ, որ ոչ թէ 2-րդ, այլ 5-րդ բաժանման շատ աշակերտներ չեն կարողացնել լուծել դորան, գուցէ շատերը չհաւատան, բայց և այնպէս իրողութիւն է, որ Ներսէսեան դպրոցը աւարտած մի ուսուցիչ ալդ խնդիրը չկարողացաւ լուծել.

Պակաս գժւարամարս և անմատչելի չեն և հետեւեալ խնդիրները.

2. Երկու տեսակ շաքարաւազ կար. մէկի գրւանքան 11 կոպէկ արժէր, իսկ միայնը — 16. դոցանից խառնուրդ կազմեցին և գրւանքան 12 կոպէկով ծախեցին, Ամբողջ խառնուրդը ինչքան է քաշում, եթէ որ ստորին տեսակ շաքարաւազից 72 գրւանքակ է վերցրած.

3. Երեք գրագիր ձեռագրից 84 թերթ արտագրեցին. առաջինը երկրորդից, իսկ երկրորդը երրորդից՝ երկու-երկու անգամ աւելի էին արտագրել, նորա աշխատանքի վարձը ինչպէս պէտք է բաժանէին, եթէ իրաքանչիւր և թերթի արտագրութեան համար նոցա մի մանէթ էին տալիս.

4. Արևեստանոցի տէրը հաշւեց, որ իր առաջ նաւթը միայն 16 օր կը բաւականանակ, եթէ ամենայն օր 18 լապտերները — օրէնը 6 ժամ վառւէին. Այդ նաւթը քանի օր կը բաւականանակ, եթէ որ 12 լապտերները օրական 8 ժամ վառւելու լինեն.

Համանման դժւարամարս և 2-րդ տարւակ համար չափից գուրաքարդ խնդիրներ շատ կան դասագրքում. դոքա աշակերտների մատարութերը, դաստողութիւնը կրթելու, զարդացնելու փոխարէն, միայն կը լատեն, կրթացնեն, որովհետև իրա-

քանչիւր ողջից բարձր աշխատութիւն միան կործանիչ հետեանքներ է ունենալ:

Գանք պ. Նըրզնկեանցի թարգ-  
մանած դասագրքի երրորդ էական  
պակասութեան, կար ժամանակ, երբ  
մանկավարժները, օրինակ, Նապու-  
շեալին, Ա. և Բ. բաժանմունքնե-  
րամ թւարանական չորս գործողութ-  
թիւնները անցնում էին միանգամից,  
անդիջապէս առաջարկելով խնդիր-  
ներ չորս գործողութիւններով խառն-  
Դասաւութեան ալդ եղանակը են-  
թարկելով աշակերտին մի քանի  
գործարութիւնների միանգամից, մե-  
զանչում էր մանկավարժութեան ան-  
կանոնի դէմ, որ ասում է՝ միանգա-  
մից մի գմարութիւն—ու օճոյ  
Երգածութեան աշակերտ, աշա-  
կերտը ստիպւած էր միանգամից  
ընթառնել և խնդրի բովանդակութիւնը  
և նրա թւարանական խմասը և  
չորս գործողութիւնների առանձին-  
առանձին էութիւնը և ալդ գործո-  
ղութիւնների գիտակցաբար և արա-  
գութեամբ կատարելու զանազան մի  
ջոցները, որ հետո բաներ չեն-  
Ուստի թւարանութեան դասաւու-  
թեան ալդ եղանակի դէմ վերջին  
ժամանակները կրիւ Հկամց, որի  
հատեանքը եղաւ նոր մնթողի ստեղ-  
ծումը. Ալժմ մանկավարժները նախ  
սովորեցնում են թւարանական գոր-  
ծողութիւնները առանձին. առանձին  
և ապա դիմում չորս գործողութիւն-  
ներով խառն խնդիրներին. Նոր  
մնթողի գիտաւոր ներկայացուցիչ-  
ներից մէկն էլ պ. Գնդզենքերգն է.  
միան լարգելլ մանկավարժը, կար-  
ժես հին մեթոդի ազդեցութեան տակ,

առանձնանձին-առանձնանձին գործողութիւնների վրա քիչ է ուշք դարձրել որ կհաստատենք երեք կարգ փաստերով. Նախ՝ երկրորդ բաժանմունքում 20—100 թւերի սահմաններում, հանման գործողութեան բոլոր աստիճանները ուսումնասիրելու համար առաջարկում է ընդ ամենը 28 խնդիր, որ հարկաւ քիչ է. նույնը կարելի է ասել մնացած 3 գործողութիւնների մասին. Երկրորդ, իւրաքանչյւը լիտազակ գործողութիւնները անցնելիս, նախկին գործողութիւնները միանգաման մոռացութեան է տալիս, չկրկնելով նոցա. աղղակէս բազմապատկման գործողութիւնը ուսումնասիրելիս, չէ տալիս ոչ մի խնդիր գումարման, հանման և կամ բազմաստկման գործողութեան ուսումնասիրութեան, չէ առաջարկում ոչ մի խնդիր գումարման, հանման և կամ բազմաստկման գործողութիւններով. Այդ եղանակով աշակերտները մի կողմից սովորելով նոր գործողութիւն, միաւ կողմից անցած գործողութիւնները մոռացութեան կը տան և հետևաբար լաւ նախապատրաստած չեն լինիլ չորս գործողութիւններով խասան խնդիրներին լազողութեամբ անցնելու. Երրորդ՝ առանձին առանձին գործողութիւնների զանազան աստիճանները ուսումնասիրելիս, նորագոյն մանկավարժներից շատերը, օր. Լուրենց, խնդիրներին կից տալիս են և թւական վարժութիւններ. ազդ չէ անում պ. Գոլղենքեղը, բաւականանալով զբարի վերջը դրած օրինակ ներսում, և հարկէ հմուտ և բարեկալող

ուսուցիչը կարող է օգտվել այդ վարժութիւններից, ընտրելով համապատասխան օրինակները, բայց որովհետև աղջիկի ուսուցիչներ հազիւթէ շատ ունենանք, ուստի ցանկալի է, որ խնդիրներին կից լինէին համապատասխան օրինակները, այդ ձևով պ. Գողենբերգի մեթոդի գաղտնիքը կպարզէր նույն խնդ անհմուտ ուսուցիչների համար:

Մեր արած երեք նկատողութիւններով կամեցանք հաստատել մի բան, այն է, որ Գողենբերգը մշաբանական առանձին գործողութիւնների վրա քիչ է ուշք գարձնել, մի հաճախամանք, որ կազմում է պ. Նրգնկեանցի թարգմանած դասագրքի Յ. Ի. Հական պակասութիւնը,

Չնպելով լիշտակած բոլոր թերութիւններին, Գողենբերգի դասագրքը, գլխաւորապէս երկրորդ տարակ դասընթացքը, մեր դպրոցներում ընդունած դասագրքերի մէջ ամենալավը ամենաօպտակարն է, Առաջին ահագին առաւելութիւնը, որ գտնում ենք ուսանելու հայտնակի դասագրքում, կալանում է նրանում, որ նրա 752 խնդիրները և 500 ից ամելի թւական վարժութիւնները դասաւորւած են վերին աստիճանի սիստեմատիկաբար. ամեն մի խնդիր, ամեն մի թւական օրինակ մի կողմից լինելով հետեւանք նախընթաց դասի, միա կողմից կազմում են անհրաժեշտ հիմք հետեւալ վարժութիւնների. Հեշտից դէպի դժւարը, պարզից դէպի բարդը, — ահա մանկավարժութեան ամենամեծ սկզբունքը, և ալդ սկզբունքին Գողենբերգը ծառակել է մեծ լաջողու-

թեամբ, խիստ հետեւողականութեամբ, շատ ու շատ փետ թողնելով մեր բոլոր բաժանմունքներում գործածւող վարդ գաղամած դասագրքերը:

Ակդամէս առաջին հարիւրեակի սահմաններում գումարան գործողութիւնը սովորեցնելու նպատակով բերած թէ պարզ խնդիրները (տես 36-րդ հրես) և թէ օրինակները դասաւորւած են հետեւալ եօթ աստիճաններով, որոնցից իւրաքանչիւրը նախապատրաստութիւն է հետեւալ հետեւալ համար:

1. Տասնեակների գումարումն—  
40+50 կամ 20+60.

2. Տասնեակների և միաւորների գումարումը—30+7 կամ 50+49.

3. Իւրաքանչիւր գումարելին բաղկացած է տասնեակից և միաւորնից, միաւն միաւորների գումարը նոր տասնեակ չէ գոկացնում—42+55 կամ 24+72.

#### Ահա շարքը.

- 1) 40+50 կամ 60+20 և ալլ.
- 2) 30+7 կամ 50+49 "
- 3) 49+55 կամ 24+72 "
- 4) 37+3 կամ 85+5 "
- 5) 67+23 կամ 41+59 "
- 6) 36+7 կամ 77+9 "
- 7) 27+45 կամ 36+59 "

Իւրաքանչիւր ուսուցչին համականալի է թէ որքան ալդ աստիճանները իրար հետ շղթաված ու մերտ կապւած են, գնալով աստիճանաբար հեշտից դէպի դժւարը, Նոհնանման հետեւողականութիւն կդանենք և ալդ գործողութիւնները ուսումնաւորելիս, նոհնապէս և բարդ խնդիրների դասաւորութեան մէջ, Վերջինիս համար էլ մի ապացուց:

573. Երկու հիւան աթոռներ նորոգելու համար 68 մանէթ ստացան, մէկը 19 աթոռ նորոգեց, իսկ միաը - 15: Խւրաքանչիւր հիւան որքան փող ստացաւ:

474. Երեք եղբայր չորս դաստակ թուղթ գնեցին. մէկը 15 կոպէկ տևեց, միւաը - 14, իսկ երրորդը - 19: Խւրաքանչիւր եղբայր որքան թուղթ պէտք է ստանալ:

Միթէ հարկաւոր է ասել որ երիրորդ խնդիրը մինելով աւելի բարդ, այնուամենակիւ ինքն ըստ ինքեան հեշտութեամբ կլուծէի, եթէ առաջին խնդիրը աշակերտները գիտակցարար հասկացել և լուծել են, կրկնում ենք, թէ պարզ ու բարդ խնդիրների և թէ օրինակների վերին աստիճանի սիստեմատիկաբար դասաւորութեան կողմից Գողենքերգի դասագիրքը մեր մէջ իր նմանը չունի:

Մենք պարզեցինք Գողենքերգի դասագրքի առաջին և ամենաէական արժանաւորութիւնը, Երկրորդ՝ Գողենքերգի ինդիրները, վերցրած մինելով կեանքի բազմազան հանգամանքներից, թէ իրանց բովանդակալութեամբ և թէ մանաւանդ թւարանական իմաստով, բարդութեամբ, խիստ բազմակողմանի են: Մի կողմ թողնելով վերը վիշած մի շարք դժւարամարտ և անմատչելի խնդիրները, մնացածներում մնանք կունենանք աշակերտների մտքին, դասողութեան լի ու մենունդ տուղ նապատակակարմար նիւթ, Ազդ խնդիրները ոչ անքան պարզ են, որ քնացնեն, թուղացնեն երեխալի մտաւոր ուժերը, ինչպէս օր Հենչելի խնդիրները, և ոչ էլ

ակնքան դժւար, որ ջլատեն, ուժասպառ դարձնեն նոցա. հետևաբար հիանալի զէնք են ներկալացնում մանուկների մտածելու, դատելու ընդունակութիւնը դարգացնելու համար Մեր խօսքերը զգալի դարձնելու համար բերենք երկու-երկու օրինակներ Գողենքերգից և Հենչելից:

Գողենքերգիցից.

Այս հեղինակի խնդիրները վերջանում են դասագրքի 73 երեսում: ահա 71 երեսից արտագրած Յ խնդիրներ:

541. Մի հիւան 8 օրում 87 շըրջանակ շնուց. առաջին 3 օրում — օրէնը 13 շրջանակ էր շինում, իսկ հետեւեալ 4 օրում՝ օրական 9 շրջանակ: Ութէրորդ օրուակ շինած շրջանակները քանիան են:

526. Գիւղացին 51 արշին երկարութիւն ունեցող հաստ պարանը 4 կտոր արեց, այնպէս որ առաջի կտորը՝ 11 արշին դուրս եկաւ, երկրորդը - 13, իսկ մնացած երկու կտորը հաւասար: Վերջին երկու կտորներն ինչ երկարութիւն ունեցան:

619. Ջրամբարի մէջ երկու խողովակ է բերւած: մի խողովակից մի բոպէում ներս է թափում 10 դոլ ջուր, իսկ միաւից դուրս է գնում մի բոպէում - 6 դոլ: Ջրամբարումը ինչքան ջուր կը լինի, եթէ որ 2 խողովակն էլ 7 բոպէ բաց թողնեն:

Հենչելից:

1) 65 արշին մահողից դերձակը 5 չուխակ և 2 շարւար է կարում: մէկ զողին որքան է կտրում:

2) 75 օրւակ ջուրը 5 արտի մէջ ջրում է հաւասարապէս: Խւրաքան-

Վիւրին որքան է հասնում:

3) 80 ծառ 5 կարգով են տնկած, հաւասար հաւասար չափով. 3 լիտրով ողբան ծառ են.

Ի՞նչ ասել կուզէ, որ Դոլցենքը-  
դի խնդիրները անհամեմատ չառ-  
նիվթ են տալիս երեսաների մտա-  
ծողութեան, դատողութեան համար,  
քան չենելի խնդիրները:

Դոքա Գողգենը բրդի միջին բար-  
դութեան խնդիրներն են, կան և ա-  
ւելի ոճաբանները, թէ և մատելի:

Գողգենքերզի դասագրքի պարզ  
զած երկու արժանաւրութիւնները  
մեր աշքում անքան ահագին նշա-  
նակութիւն ունին, որ առատու-  
թեամբ լրացնելով դասագրքի թե-  
րութիւնները միանգամայն աւելորդ  
են դարձնում կանգ առնել նրա ալ  
առաւելութիւնների վրաև ուստի  
թողլ եմ տալիս ինձ վերջին նկատո-  
ղութիւն լեզվի վերաբերեալ, Գող-  
գենքերց ինչպէս լավոնում է իր  
լառաջարանում, որ և դառել է պ.  
Արզնկու.անցի գողանովի լառաջա-  
րանը, դասագրքի լեզվին վերաբեր-  
եալ է մեծ խնամքով Խւրաքանչիւր  
առարկալ պահանջում է համապա-  
տասխան լեզու. թւաբանութեան,  
մաթեմատիկալի լիզուն պէտք է լի-  
նի պարզ, որոշ, կարճ, լակոնական,  
աւգ ամենը տեղի ունին ուռա հեռի-

Նակի դասագրքում, հետեարար և  
պ. Արզնկանցի թարգմանութեան  
մէջ. միայն հայ հեղինակը հատ-հատ  
թող է տալ քմանաձ-անձիշտ թարգ-  
մանութեանին ու անառակ.

Стоякъ — ъѣмъ въ мѣстностяхъ.

Столяръ — чрево и шинка ѡ африк.

Лугъ — въ южн. Азии и южн.

Ամփոփելով մեր ասածները, գալիս ենք հետևեալ եղակացութիւններին, Պ. Նրգնկեանցի երկրորդ տարւակ դասագիրքը մեր դպրոցներում ընդունւած թւաբանական դասագրքերից ամենալաւը, ամենաօգտակարն է, ուստի արժանի է տարած. ման, մանաւանդ եթէ մասնացոյց արած թերութիւնները ուղղէին. Պ. Նրգնկեանցի Ա. տարւակ դասագիրքը մեր դպրոցների համար անհպատակարմար է, քանի որ տալիս է նիւթ միայն մինչև լուսար ամիսը, և որովհետև մինչև ալլ ժամանակ աշակերտները, գրել-կարդալ նոր սովորելով, չեն կարող օգտւել դասագրքից, հետեւաբար պ. Նրգնկեանցի թարգմանած Ա. տարւակ դասագիրքը չպէտք է տալ աշակերտների ձեռք. բայց ինքը ուսուցիչը կարող է օգտւել մինչև լուսարը նիւթ ունենաւու համար.